ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Մարտունի **27-ը սեպտեմբերի 2024 թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

2024 թվականի սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստը: Նիստին ներկա էին ավագանու 19 անդամները: Բացակա էին՝ Հայկ Ալեքսանյանը, Անդրանիկ Գրիգորյանը, Արարատ Խաչատրյանը, Սվետլանա Հարությունյանը, Լիանա Հովհաննիսյանը, Կարինե Հովհաննիսյանը, Անդրանիկ Մովսիսյանը, Արմեն Սեդրակյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին բնակավայրերի վարչական ղեկավարները և աշխատակազմի բաժինների պետերը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 27-ի յոթերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բնակիչներին դրամական օգնություններ տրամադրելու մասին.
3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի №94-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչներ Հայկ Սարիբեկի Հովհաննիսյանին, Ռուզաննա Պանդուխտի Պողոսյանին, Իշխան Գառնիկի Ներսիսյանին և Մարտունի քաղաքի բնակիչ Նարեկ Գևորգի Շաբոյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով շինություններ կառուցելու համաձայնություն տալու մասին.
5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 17/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-082-0053-0007 կադաստրային ծածկագրով 0.0113 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարելու համաձայնություն տալու մասին.
6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամասի 1-ին փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-066-0039-0007 կադաստրային ծածկագրով 0.3679 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարելու համաձայնություն տալու մասին.
7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Ի. Խաչատրյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 3/2 հասցեում գտնվող 05-003-0159-0024 կադաստրային ծածկագրով 0.01 հա և Ի. Խաչատրյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 3/1 հասցեում գտնվող 05-003-0159-0025 կադաստրային ծածկագրով 0.009909 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման հողամասերն աճուրդային կարգով օտարելու համաձայնություն տալու մասին.
8) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Կամոյի փողոց, թիվ 46/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-0769-0002 կադաստրային ծածկագրով 0.08742 հա մակերեսով հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.
9) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ծառերը հատելու համաձայնություն տալու մասին.
10) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 3.8672 հա և 13.4166 հա մակերեսներով արոտավայրերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

11) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-027-2102-0021 կադաստրային ծածկագրով 3.1341 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

12) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-084-0109-0036 կադաստրային ծածկագրով 3.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

13) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-027-0435-0141 կադաստրային ծածկագրով 0.50003 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

14) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-033 0242-0006 կադաստրային ծածկագրով 0.3975 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

15) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-0103-0005 կադաստրային ծածկագրով 33.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

16) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Արծվանիստի մշակույթի կենտրոն», «Զոլաքարի մշակույթի տուն», «Լիճքի մշակույթի տուն», «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Ծովինարի մշակույթի կենտրոն», «Զորագյուղի մշակույթի կենտրոն», «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն», «Վարդաձորի մշակույթի կենտրոն» մշակութային հիմնարկների լուծարման հաշվեկշիռները հաստատելու մասին.

17) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովինարի մշակույթի կենտրոն», «Զոլաքարի մշակույթի կենտրոն», «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն», «Լիճքի մշակույթի կենտրոն», «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Զորագյուղի մշակույթի կենտրոն» և «Վարդաձորի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույքեր տրամադրելու համաձայնություն տալու մասին.

18) Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու վերաբերյալ Մարտունի համայնքի հայտը հաստատելու մասին.

19) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի երկրորդ հերթական նիստի օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 126-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեի Արծվանիստի, Ծովինարի, Զոլաքարի, Ներքին Գետաշենի, Լիճքի, Ծովասարի, Զորագյուղի և Վարդաձորի մշակույթի կենտրոն բյուջետային հիմնարկների նախահաշիվների ծախսային հոդվածներից պակասեցնել ընդամենը 71690186 ՀՀ դրամ, այդ թվում՝ 4111 հոդվածից պակասեցնել 41505680 ՀՀ դրամ, 4112 հոդվածից 6500000 ՀՀ դրամ, 4212 հոդվածից 7569632 ՀՀ դրամ, 4213 հոդվածից 774480 ՀՀ դրամ, 4214 հոդվածից 412000 ՀՀ դրամ, 4221 հոդվածից 590000 ՀՀ դրամ, 4232 հոդվածից 90000 ՀՀ դրամ, 4233 հոդվածից 500000 ՀՀ դրամ, 4234 հոդվածից 300000 ՀՀ դրամ, 4239 հոդվածից 950000 ՀՀ դրամ, 4241 հոդվածից 1212549 ՀՀ դրամ, 4251 հոդվածից 4591550 ՀՀ դրամ, 4252 հոդվածից 732000 ՀՀ դրամ, 4261 հոդվածից 1024650 ՀՀ դրամ, 4263 հոդվածից 288000 ՀՀ դրամ, 4267 հոդվածից 2888935 ՀՀ դրամ, 4269 հոդվածից 1760710 ՀՀ դրամ և որպես սուբսիդիա հատկացնել 2024 թվականի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «Մարտունու մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ» նախահաշվի 4511 հոդվածին՝ «Մարտունի համայնքի Արծվանիստի մշակույթի կենտրոն», «Ծովինարի մշակույթի կենտրոն», «Զոլաքարի մշակույթի կենտրոն», «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն», «Լիճքի մշակույթի կենտրոն», «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Զորագյուղի մշակույթի կենտրոն» և «Վարդաձորի մշակույթի կենտրոն» նորաստեղծ ՀՈԱԿ-ների 2024 թվականի սեպտեմբերից դեկտեմբեր ամիսների աշխատանքային գործունեությունն ապահովելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բյուջեից սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություններ՝
   1) Ձորագյուղ բնակավայրի բնակիչ Անտոն Մնացի Սողոյան – 150000 (հարյուր հիսուն հազար) դրամ:
   2) Լիճք բնակավայրի բնակիչ Սեդա Լևոնի Պռազյան – 97000 (իննսունյոթ հազար) դրամ:
2. Մարզիչ Արաքս Ռուբիկի Մարգարյանին տրամադրել 300000 (երեք հարյուր հազար) դրամ՝ Ձորագյուղի մշակույթի կենտրոնում գործող կարատեի խմբակի մարզիկներ Խաչիկ Վասպուրակի Խլղաթյանի և Գրիգոր Իշխանի Սաֆարյանի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում կայանալիք կարատեի պատանեկան առաջնությանը մասնակցելու նպատակով:
3. Մարտունի համայնքի «Մարտունի քաղաքի Ս. Միհերյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի սան Սիմոն Ռոմիկի Սիմոնյանին Եվրոպայի ավագ տարիքի պատանիների առաջնությունում հաղթող ճանաչվելու կապակցությամբ Սիմոն Ռոմիկի Սիմոնյանին և մարզիչ Գևորգ Սամվելի Սարգսյանին տրամադրել 200000-ական (երկու հարյուր հազարական) դրամ: Սիմոն Սիմոնյանին տրամադրվող գումարը հատկացնել նրա ծնող Ռոմիկ Լիպարիտի Սիմոնյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի №94-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 05-039-0218-0013 կադաստրային ծածկագրով 0.01936 հա և 05-039-0218-0014 կադաստրային ծածկագրով 0.06043 հա մակերեսներով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված հողամասերը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին» №94-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման վերնագրում և որոշման 1-ին կետում «05-039-0218-0013» ծածկագիրը փոխարինել «05-039-2018-0013» ծածկագրով.
   2) որոշման վերնագրում և որոշման 2-րդ կետում «05-039-0218-0014» ծածկագիրը փոխարինել «05-039-2018-0014» ծածկագրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Տիգրան Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 129-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀԱՅԿ ՍԱՐԻԲԵԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ՌՈՒԶԱՆՆԱ ՊԱՆԴՈՒԽՏԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, ԻՇԽԱՆ ԳԱՌՆԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ՇԱԲՈՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ (ՀՈՂԱՄԱՍԻ) ՍԱՀՄԱՆԻՆ ԿԻՑ՝ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝
   1) Հայկ Սարիբեկի Հովհաննիսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Դարեր թաղամասի 3-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 1 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ավտոտնակ և մառան.
   2) Ռուզաննա Պանդուխտի Պողոսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Վանքի թաղամասի 6-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել բնակելի տուն.
   3) Իշխան Գառնիկի Ներսիսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Կենտրոն թաղամասի 5-րդ փողոց, թիվ 10 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման հողամասում կառուցել պահեստ.
   4) Նարեկ Գևորգի Շաբոյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Մարտունի քաղաքի Չարենցի փողոց, թիվ 18 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ավտոտնակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Տիգրան Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 130-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 17/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-082-0053-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0113 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 17/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-082-0053-0007 կադաստրային ծածկագրով 0.0113 հա մակերեսով հողամասը (նպատակային

նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման) օտարել աճուրդային կարգով:

2. Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանել 130000 (հարյուր երեսուն հազար) դրամ, մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսը՝ 6500 (վեց հազար հինգ հարյուր) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Օլգա Դավթյանը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵՐԻՆ ԴԵՄԵՐ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-066-0039-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.3679 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամասի 1-ին փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-066-0039-0007 կադաստրային ծածկագրով 0.3679 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման) օտարել աճուրդային կարգով:
2. Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանել 3000000 (երեք միլիոն) դրամ, մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսը՝ 150000 (հարյուր հիսուն հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Օլգա Դավթյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 132-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ Ի. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 3/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0159-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.01 ՀԱ ԵՎ Ի. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0159-0025 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.009909 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Ի. Խաչատրյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 3/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-0159-0024 կադաստրային ծածկագրով 0.01 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման) օտարել աճուրդային կարգով՝ աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանելով 200000 (երկու հարյուր հազար) դրամ, մեկ քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսը՝ 10000 (տասը հազար) դրամ:
2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Ի. Խաչատրյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 3/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-0159-0025 կադաստրային ծածկագրով 0.00909 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման) օտարել աճուրդային կարգով՝ աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանելով 198000 (հարյուր իննսունութ հազար) դրամ, մեկ քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսը՝ 9900 (ինը հազար ինը հարյուր) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Օլգա Դավթյանը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 133-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 46/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-003-0769-

0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.08742 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1 և 76-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի №286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետը, նկատի ունենալով, որ 05-003-0769-0002 կադաստրային ծածկագրով հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Կամոյի փողոց, թիվ 46/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-0769-0002 կադաստրային ծածկագրով 0.08742 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ ջրային, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ջրային) 30 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով:
2. Կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 38000 (երեսունութ հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Օլգա Դավթյանը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 134-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՔԵՖՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Մարտունի քաղաքի բնակիչ Ալբերտ Սեդրակի Զաքարյանի 09.04.2024 թվականի №2389-Ք դիմումը և Ներքին Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավարի 12.09.2024 թվականի №494 գրությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ հատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 17 հասցեում Ալբերտ Սեդրակի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում կառուցված շինության հետնամասում առկա ծերացած և արմատային համակարգով շինության հիմքին վտանգ սպառնացող թվով 2 սոճի տեսակի ծառերը:
2. Համաձայնություն տալ հատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բուժամբուլատորային կից տարածքում գտնվող և կոյուղագծի շահագործմանը խոչընդոտող թվով 2 բարդի տեսակի ծառերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Տիգրան Ալեքսանյանը: Չի քվեարկել Մեխակ Հակոբյանը:

Կողմ-12 Դեմ-4 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 135-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3.8672 ՀԱ ԵՎ 13.4166 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԴԱՎԻԹ ՔԵՖՈՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» №16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող 05-062-0671-0008 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 3.8672 հա մակերեսով արոտավայրը 10 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով:

2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող 05-062-0635-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 13.4166 հա մակերեսով արոտավայրը 10 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Տիգրան Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 136-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-027-2102-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 3.1341 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՔԵՖՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգ սահմանելու մասին» N1477-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-027-2102-0021 կադաստրային ծածկագրով 3.1341 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության իրավունքով:
2. Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի չափը սահմանելով 7000 (յոթ հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Հակոբ Բարոյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 137-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-084-0109-0036 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 3.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՔԵՖՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգ սահմանելու մասին» N1477-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-084-0109-0036 կադաստրային ծածկագրով 3.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության իրավունքով:
2. Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի չափը սահմանելով 11000 (տասնմեկ հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Հակոբ Բարոյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 138-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-027-0435-0141 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.50003 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՔԵՖՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-027-0435-0141 կադաստրային ծածկագրով 0.50003 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը 5 (հինգ) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով:
2. Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Տիգրան Ալեքսանյանը և Հակոբ Բարոյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 139-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-033-0242-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.3975 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՔԵՖՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-033-0242-0006 կադաստրային ծածկագրով 0.3975 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը 10 (տասը) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով:
2. Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 16000 (տասնվեց հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Տիգրան Ալեքսանյանը:և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 140-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-003-0103-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 33.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՔԵՖՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-0103-0005 կադաստրային ծածկագրով 33.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը 10 (տասը) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով:
2. Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 132000 (հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Տիգրան Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 141-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԶՈԼԱՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ», «ԼԻՃՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ», «ԾՈՎԱՍԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԾՈՎԻՆԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՎԱՐԴԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Արծվանիստի մշակույթի կենտրոն» մշակութային հիմնարկի լուծարման հաշվեկշիռը /կցվում է/:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Զոլաքարի մշակույթի տուն» մշակութային հիմնարկի լուծարման հաշվեկշիռը /կցվում է/:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Լիճքի մշակույթի տուն» մշակութային հիմնարկի լուծարման հաշվեկշիռը /կցվում է/:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Ծովասարի մշակույթի կենտրոն» մշակութային հիմնարկի լուծարման հաշվեկշիռը /կցվում է/:
5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Ծովինարի մշակույթի կենտրոն» մշակութային հիմնարկի լուծարման հաշվեկշիռը /կցվում է/:
6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Ձորագյուղի մշակույթի կենտրոն» մշակութային հիմնարկի լուծարման հաշվեկշիռը /կցվում է/:
7. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն» մշակութային հիմնարկի լուծարման հաշվեկշիռը /կցվում է/:
8. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Վարդաձորի մշակույթի կենտրոն» մշակութային հիմնարկի լուծարման հաշվեկշիռը /կցվում է/:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Տիգրան Ալեքսանյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 142-Լ/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾՈՎԻՆԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԶՈԼԱՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԼԻՃՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԾՈՎԱՍԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ «ՎԱՐԴԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 3-րդ թաղամաս, 3-րդ փողոց, թիվ 19 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.1418 հա մակերեսով հողամասն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովինարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու նպատակով.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 6 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 05-034-0110-0051 կադաստրային ծածկագրով 0.1833 հա մակերեսով հողամասն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Զոլաքարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու նպատակով.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Կենտրոն թաղամասի 5-րդ փողոց, թիվ 11 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 05-066-0127-0051 կադաստրային ծածկագրով 0.13216 հա մակերեսով հողամասն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու նպատակով.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-2 թաղամասի 12-րդ փողոց, թիվ 24 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 05-039-0067-0082 կադաստրային ծածկագրով 0.1987 հա մակերեսով հողամասն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Լիճքի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու նպատակով.

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի 1-ին փողոց, թիվ 45/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 05-036-0047-0010 կադաստրային ծածկագրով 0.32 հա մակերեսով հողամասն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովասարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու նպատակով.

6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զորագյուղ բնակավայրի 12-րդ փողոց, թիվ 71 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 05-060-0073-0013 կադաստրային ծածկագրով 0.5129 հա մակերեսով հողամասն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Զորագյուղի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու նպատակով.

7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրի Ալաշկերտի փողոց, թիվ 16 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 05-084-0031-0013 կադաստրային ծածկագրով 0.252 հա մակերեսով հողամասն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վարդաձորի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Տիգրան Ալեքսանյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 143-Ա/

Լսեցին

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՎԱՐԱԶԴԱՏ ՄՀԵՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հայտերի ներկայացման հրավերին:
2. Համաձայնություն տալ համայնքի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար հատկացնել 20 % համաֆինանսավորում՝ համաձայն հայտերի ներկայացման հրավերի Բաժին 1-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Տիգրան Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 144-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի երկրորդ հերթական նիստի օրը սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 25-ին, ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Տիգրան Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 145-Ա/

Ավագանու անդամներ՝

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԱՐՈՆ ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱԿՈԲ ԲԱՐՈՅԱՆ

ԱՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՊ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ՕԼԳԱ ԴԱՎԹՅԱՆ

ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԽԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԱՂԱՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

ՄԱՐԻՆԱ ՀՈՎԵՅԱՆ

ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Սվետլանա Հովհաննիսյանը _____